ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ

Հիմնադրված 1922

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թ.

№ 1 (1156)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 60-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏՈՆԴ, ՀԱՅ ԶԻՆՎՈՐ

Հունվարի 28-ը հայոց բանակի, ՀՀ զինված ուժերի մասնագիտական տոնն է: Մեր բանակը դարձավ 34 տարեկան: Հայոց բանակի ստեղծման հիմքը դարձավ 1992 թվականի հունվարի 28-ի պատմական որոշումը «Հայաստանի Հանրապետության պաշտպանության վերաբերյալ»:

Ինչպես ասել է սպարապետ Վազգեն Սարգսյանը՝ բանակը ազգի ինքնաճանաչման հայելին է, բոլոր հայերի ծնունդն է, հայության հավաքական կերպարն է, նրա պատասխանատվությունը, նրա պատմության վերագնահատումը և հայացքը ապագային:

Հայրենիքի հենասյունը հզոր բանակն է: Յուրաքանչյուր հայ մարդ իր հոգուց պետք է մի մասնիկ տա բանակի հզորացման գործին:

Մեր խոնարհումը հանուն գալիք օրվա զոհված բոլոր հերոսների հիշատակին:

Շնորհավոր տոնդ, հայ զինվոր, շնորհավոր սահմանին կանգնած հայ քաջորդի:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺ Է, ԵՐԲ ԱՅՆ ԾԱՌԱՅՈՒՄ Է ՄԱՐԴՈՒՆ

Սիրելի՛ ուսանողներ, դասախոսներ, կրթական համայնքի հարգելի՛ ներկայացուցիչներ, հունվարի 24-ը՝ Կրթության միջազգային օրը, ևս մեկ առիթ է վերահաստատելու կրթության առանցքային դերը հասարակության զարգացման, արժեքների ձևավորման և ապագայի կերտման գործում:

Այս տարվա խորագիրը՝ «Երիտասարդության ուժը. համաստեղծելով կրթությունը», շատ խոսուն է: Այն ընդգծում է, որ կրթությունը չի կարող լինել միակողմանի գործընթաց. այն ձևավորվում է սովորողի, ուսուցչի և կրթական միջավայրի համատեղ ներգրավվածությամբ: Երիտասարդների ակտիվ մասնակցությունը կրթական քաղաքականությունների և գործընթացների ձևավորմանը մեր ժամանակների ամենակարևոր նախապայմաններից է:

Որպես մանկավարժական համալսարան՝ մենք առանձնահատուկ պատասխանատվություն ունենք կրթության ապագան կերտելու գործում: Մեր առաքելությունն է ոչ միայն փոխանցել գիտելիք, այլև ձևավորել մտածող, նախաձեռնող, պատասխանատու մանկավարժներ, որոնք կկարողանան կողմնորոշվել արագ փոփոխվող աշխարհում, կիրառել նորարարական մոտեցումներ և գիտակցաբար օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաները, այդ թվում՝ արհեստական բանականությունը՝ ի նպաստ սովորողի զարգացման:

Կրթությունը ուժ է, երբ այն ծառայում է մարդուն, բացահայտում նրա ներուժը և նպաստում թե՛ անհատի, թե՛ հասարակության բարեկեցությանը: Այս ճանապարհը, ինչպես միշտ, միասին ենք անցնելու՝ սովորելով, ստեղծելով և համաստեղծելով:

Շնորհավորում եմ Կրթության միջազգային օրվա առթիվ և մաղթում նոր գաղափարներ, ներշնչանք և հետևողական առաջընթաց:

Լիլիթ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանի հարցազրույցը մանկավարժական կրթության, կրթական հիմնախնդիրների, Մանկավարժական համալսարանի գործունեության մասին կադացեք «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի առաջիկա համարում:

Քննարկում համագործակցային նախագծերի շուրջ

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանն ընդունեց Հայաստանում Բրիտանական խորհրդի տնօրեն Ադդե Հովասափյանին և ծրագրերի համակարգող Մարիամ Արզումանյանին: Երկուստեք գործնական քննարկում ծավալվեց տարբեր նախագծերի շուրջ համագործակցության ուղիների մասին:

Ռեկտորի պաշտոնակատարն առաջարկեց աջակցել դասախոսների՝ տարբեր մակարդակների անգլերենի որակական մակարդակի բարձրացմանը, միաժամանակ ներկայացրեց հարցման արդյունքում բուհի մեծ թվով դասախոսների՝ անգլերենի ուսուցմանը մասնակցելու պատրաստակամությունը:

Լիլիթ Մկրտչյանը համագործակցությունը դիտարկեց երկու մակարդակով՝

Բրիտանական խորհուրդը սկզբից մինչև վերջ կազմակերպի վերապատրաստումն իր միջոցներով կամ թեստերի կազմումն ու ամփոփիչ քննությունն իրականացնի՝ կարևորելով արտաքին կողմի գնահատումը՝ թեստերի կազմում և ամփոփիչ քննություն:

Ռեկտորի պաշտոնակատարը խոսեց նաև դասախոսների շարունակական մասնագիտական զարգացմանն ուղղված մանկավարժական կրթության հայեցակարգի մշակման մասին, կարևորեց դասախոսների շարունակական մասնագիտական զարգացմանն ուղղված ներդրումը, որը միաժամանակ ենթադրում է վերջիններիս կողմից լուրջ վերաբերմունք գործընթացին, այդ տեսանկյունից հետաքրքրվեց բրիտանական փորձով:

Լիլիթ Մկրտչյանը ներկայացրեց նաև համալսարանին կից հարթակ ստեղծելու մասին իր նկատառումները, որտեղ հանրակրթական դպրոցների տնօրենները կկիսեն իրենց փորձը, կխոսեն մեթոդական, կազմակերպչական և այլ խնդիրների մասին:

Մյուս հարցը վերաբերում էր ՀՊՄՀ աշխատակիցների և տարածքի երեխաների համար անգլերեն ընթերցանության կենտրոնի ստեղծման գաղափարին, որին անհրաժեշտ կլինի անգլերեն ժամանակակից գրականություն:

Առարկայական խոսակցություն ծավալվեց նաև դպրոցների տնօրենների համար անգլերենի դասընթացների կազմակերպման շուրջ, որն իրականացնում է Բրիտանական խորհուրդը. առաջարկվեց դասավանդման հարցում օգտագործել մանկավարժական համալսարանի անգլերենի դասախոսների ներուժը:

Բրիտանական խորհրդի նախագահը կարևորեց անգլերենի ուսուցումը, նշելով՝ առաջնությունը տալիս են լեզվի բարելավմանն ուղղված երկարաժամկետ ծրագրերին:

Ադդե Հովասափյանը ողջունեց բուհի հետ տարբեր նախագծերի իրականացման առաջարկները և վստահեցրեց՝ առաջիկայում դրանք կքննարկեն իրենց գործընկերների հետ և կներկայացնեն հնարավոր մոտեցումների ու համագործակցության ծրագրային իրենց փաթեթը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Բարեվարքություն հանուն զարգացման

Մանկավարժական համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանն այսօր աշխատանքային հանդիպում ունեցավ «Բարեվարքություն հանուն զարգացման» հասարակական կազմակերպության համահիմնադիրներ Նարինե Ավետիսյանի և Լիլիթ Մաթևոսյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեց բուհում բարեվարքության և հակակոռուպցիոն մեխանիզմների ներդրմանը միտված ռազմավարական ծրագրի մշակման անհրաժեշտությունը: Կարևորվեց բարեվարքության զարգացման գործողությունների պլանը՝ էթիկայի հանձնաժողովի նոր աշխատակարգի մշակում, հանձնաժողովի ստեղծում, մասնագիտական դասընթացների և վերապատրաստումների անցկացում, կրթական ծրագրերում համապատասխան առարկայական մոդուլների լրամշակում, վարքականոնների նախագծի մշակում, ներքին ազդարարման գործուն

համակարգերի ներդրում և այլն:

Քննարկմանը ներկա էին նաև բուհի Ուսումնական գործընթացների հարցերով և Գիտական գծով պրոռեկտորներ Նաիրա Սաֆարյանը, Մարիամ Իսպիրյանը, Գիտական քարտուղար Հակոբ Թադևոսյանը:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը կարևորեց կառույցի հետ համագործակցությունն ու առաջակցությունը մանկավարժական բուհիհ՝ ընդգծելով, որ ուսուցիչների պատրաստման գործում ակադեմիական ազնվությունն ու էթիկան որակյալ կրթության հիմնասյուներն են:

Համալսարանական միջավայրում կոռուպցիայի հանդեպ անհանդուրժողականության մշակույթի ձևավորման առումով կողմերը կարևորեցին թեմայի վերաբերյալ իրազեկման աշխատանքները:

Հանդիպման ավարտին պայմանավորվածություն ձեռք բերվեց հուշագրի կնքմամբ զարգացնել երկկողմ համագործակցությունը, ինչը կնպաստի համատեղ ծրագրերի երկարաժամկետ և համակարգված իրականացմանը:

Մարիա ԱՂԵԿՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանն ընդունեց Մանկավարժական համալսարան այցելած կրթության միջազգային փորձագետների խմբին՝ Քեմբրիջի համալսարանի մանկավարժության պրոֆեսոր Քլեր Բրուքին, Լոնդոնի համալսարանական քոլեջի պատվավոր դոցենտ Քեյթ Թըրվին, Լոնդոնի համալսարանական քոլեջի (UCL) Կրթության ինստիտուտի (IOE) պրոֆեսոր, փոխդեկան, դոկտոր Նորբերտ Պախլերին: Հանդիպմանը մասնակցում էր նաև «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի տնօրեն Արմեն Սիմոնյանը:

Հայաստան այցելած միջազգային փորձագետների նպատակն էր ծանոթանալ կրթական կլաստերի բուհերի հետ, հասկանալ գործընթացները և աջակցել կրթական բլոկի նախագծերի իրականացմանը:

Փորձագետները խոսեցին իրենց տարբեր տարիների աշխատանքային գործունեության ու փորձառության մասին, կրթական տարբեր ոլորտներում իրականացրած նախագծերի ու ծրագրերի մասին, նաև փաստեցին, որ կրթական կլաստերի աշխատանքներն իրականացվելու են 6 ուղղություններով:

Մասնագիտական խմբի առաջին այցելությունը Մանկավարժական համալսարան նպատակ ուներ ուսումնասիրություններ ու վերլուծություն իրականացնել մասնավորապես կրթության որակի և հետազոտական աշխատանքների գծով: Այդ համատեքստում նրանք հանդիպումներ ու քննարկումներ կազմակերպեցին՝ փորձելով հասկանալ՝ ինչ աշխատանքներ են իրականացնում ուսուցիչներ պատրաստող բուհի դասախոսները, ինչպես են կազմակերպում ուսուցիչների վերապատրաստումները:

Փորձագետներն արդեն տարիներ շարունակ աշխատում են «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի հետ, ունեն հստակ մոտեցումներ ու ծրագրեր և պատրաստ են բուհի մասին որոշակի տեղեկատվություն ստանալու և փաստահավաք առաքելությունն իրականացնելու արդյունքում իրենց փորձառությամբ ներդրում ունենալ «Ակադեմիական քաղաքի» կրթական կլաստերի կայացման գործում:

Մասնագիտական թիմի ղեկավար դոկտոր Նորբերտ Պախլերն անդրադարձավ Լոնդոնի մանկավարժական ինստիտուտի և համալսարանական քոլեջի միավորմանը՝ վստահեցնելով, որ կաջակցեն ուսումնական հաստատությունների միավորման իրենց փորձառությամբ, կրթական հաստատությունների միավորումն էլ դիտարկեց ոչ թե մեխանիկական միավորում, այլ կրթական առաջավոր գաղափարների տարածման հնարավորություն ամբողջ աշխարհում:

Համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանն ուրախությամբ հայտնեց, որ ինքը նոր մտածողության ու գաղափարների կրողն է, զգում է փոփոխությունների անհրաժեշտությունը, և որ համալսարանը բաց է փորձագետների քննարկումների համար՝ նրանց աջակցությամբ բուհում կառուցվածքային ու բովանդակային ավելի խոր փոփոխություններ իրականացնելու համար: Համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը փորձագետներին ներկայացրեց համալսարանական դպրոցների գործունեությունը, ընդգծեց հանրապետությունում եզակի գործող Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի գործունեությունը Մանկավարժականի կազմում, ինչպես նաև խոսեց նախադպրոցական մասնագետների պատրաստման ու մսուր-մանկապարտեզի նախագծի պլանավորման մասին:

Հանդիպմանը մասնակցում էին նաև Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը և Գիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը: Նրանք ներկայացրին իրենց գործունեությունն ու այն ոլորտները, որոնք համակարգում են:

Հանդիպման ընթացքում խոսակցություն ծավալվեց համալսարանական դպրոցների, ներառական կրթության ու հատուկ կարիքներ ունեցող երեխաների կրթական խնդիրների շուրջ:

«Ակադեմիական քաղաք» հիմնադրամի տնօրեն Արմեն Սիմոնյանը կարևորեց Մանկավարժական համալսարանի գործունեությունն ու ներուժը ապագա նախագծերի իրականացման համատեքստում և վստահեցրեց, որ համակարգման ու համատեղ աշխատանքում հնարավորինս լավագույնը կքաղեն փորձագետների հետ համագործակցությունից:

Մանկավարժական համալսարանում միջազգային փորձագետները հանդիպեցին պրոռեկտորների ու դեկանների, տարբեր ստորաբաժանումների ղեկավարների, վարչական ու պրոֆեսորադասախոսական կազմի, գրադարանային աշխատողների հետ:

Նրանք քննարկեցին մանկավարժական կրթությանը վերաբերող տարբեր հարցեր, բարեփոխումների համատեքստում ծանոթացան համալսարանի պրոֆեսորների նոր մոտեցումներին՝ ուսումնական ծրագրերից, ուսուցչական չափանիշներից մինչև ուսուցիչների վերապատրաստում, պրակտիկաների կազմակերպում:

Միլվա ԱՍՐՅԱՆ

«Հոգեկան առողջություն և հոգեսոցիալական աջակցություն Հայաստանի դպրոցներում»

Մանկավարժական համալսարանում մեկնարկեց «Հոգեկան առողջություն և հոգեսոցիալական աջակցություն Հայաստանի դպրոցներում» ծրագիրը, որն իրականացվում է Համաշխարհային բանկի, ԿԳՄՍ նախարարության և «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի աջակցությամբ: Ծրագրի ռազմավարական գործընկերներ են ընտրվել Մանկավարժական համալսարանը և Հոգեբանամակավարժական կենտրոնը (ՀՄԿ):

«Մանկավարժականը այն միջավայրն է, որը բաց է բոլոր ներդրումների համար»,-ընդգծեց համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը՝ կարևորելով ծրագիրը և ներկաներին մաղթելով արդյունավետ համագործակցություն:

Դիանա Թորոսյանը, Անի Հարությունյանը և Սոնա Կոշեցյանը համալսարանի մի խումբ դասախոսների ներկայացրին ծրագրի բովանդակությունը և փուլային այցելությունները հանրապետության տարբեր մարզերի միջամտության և համեմատության 450 դպրոցում:

Փորձագիտական խմբի ղեկավար Անի Հարությունյանն ընդգծեց՝ ծրագրի նպատակը դպրոցականների հոգեկան առողջության բարելավումն է, որ առաջիկայում լավ արդյունքների դեպքում ծրագիրը պետական աջակցությամբ կկիրառվի հանրապետության բոլոր դպրոցներում: Առաջին արդյունքները, ըստ ծնողների, գոհացուցիչ են: Ծրագրի ինտերակտիվ մոտեցումները կրթական համակարգի բոլոր օղակների համար է նախատեսված, ըստ թիրախային խմբերի աշխատանքը՝ մշակված վարժանքների օգ-

նությամբ, ուսուցիչներին հնարավորություն կտա առավել դյուրին հասկանալ խնդիրները:

Ծրագրի համակարգողները լիահույս են՝ նոր փոփոխություններ կբերի կրթական համակարգին, կնպաստի երեխաների կյանքի որակի բարելավմանը:

Այսօրվանից կմեկնարկի 8-շաբաթյա առցանց ձևաչափով սեմինար-վերապատրաստումները, որին կմասնակցեն նաև մեր բուհի դասախոսները: Սա համագործակցության լայն հնարավորություն կընձեռի երկու կողմերին՝ հետազոտական գաղափարների դուրսբերման նոր հարթակ ստեղծելու միտումով՝ ակնկալում են ծրագրի գործընկերները:

Մեծ պատիվ էր ներկայացնել Մանկավարժական համալսարանը

ՋԵՐՄՈՒԿՈՒՄ կայացած հեղինակային երգի հանրապետական մրցույթ-փառատոնին մասնակցել են հեղինակային երգի անհատ կատարողներ և ուսանողական հաստատությունների ներկայացուցիչներ:

Գալա համերգին և նրան հաջորդած հանդիսավոր մրցանակաբաշխությանը մասնակցել է հեղինակային երգի 12 կատարող: Նրանցից երեքը Մանկավարժական համալսարանից են՝ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողուհիներ Կարինե Թադևոսյանը, Մարիամ Սահակյանը և Ալվարդ Ղազարյանը:

Արդեն երկրորդ անգամ անցկացվող հեղինակային երգի հանրապետական մրցույթ-փառատոնի նպատակն է խրախուսել երիտասարդների ստեղծագործական ունակությունները հեղինակային երգի ոլորտում:

Միջոցառմանը ներկա են եղել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ԿԳՄՍ նախարար, ՀՊՄՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանը, նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը, ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը:

Մեր պաշտոնաթերթի հյուրն այսօր հեղինակային երգի փառատոնի 3 մրցանակակիրներն են՝ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողները: Ուսանողների հետ խոսեցինք մասնագիտական ոլորտի հարցերի շուրջ, փորձեցինք հասկանալ՝ վաղո՞ւց են զբաղվում ստեղծագործական գործունեությամբ, սա նրանց առաջի՞ն հաջողությունն էր, թե ունեն այլ հաջողություններ ևս, որ արժանի են հիշատակման, ի՞նչ ստեղծագործություն ներկայացրին փառատոնին, ինչո՞ւ են ընտրել Մանկավարժական համալսարանի «Երաժշտական կրթություն» մասնագիտությունը, ի՞նչ է տալիս նրանց համալսարանական կրթական միջավայրը մասնագիտական կրթությունից զատ, ովքե՞ր են նրանց դասախոսները, որ մասնագիտական կրթությունից բացի սեր ու ջերմություն են փոխանցում երաժշտության հանդեպ:

Խոսեցինք նաև ապագայի տեսլականի շուրջ:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի «Երաժշտական կրթություն» ֆակուլտետի առկա համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհի Կարինե Թադևոսյանի հեղինակած երգը մրցանակ բերեց և՛ երգը կատարողին ու նվագակցող երաժիշտներին, և՛ Մանկավարժական համալսարանին:

«Մրցույթի եզրափակիչ փուլում էջմիածնում ընտրվեցին 12 լավագույն մասնակիցները, որոնց թվում էինք նաև մենք,-ասում է Կարինեն:-Մենք ներկայացրինք իմ հեղինակած «Վերադարձիր, իմ սեր» քնարական, մեղեդային ստեղծագործությունը մեր դասախոսի՝ ամբիոնի վարիչ Աննա Հարությունյանի մասնագիտական աջակցությամբ:

Գալա համերգը տեղի ունեցավ Ջերմուկում, հունվարի 3-ին, կարծում եմ՝ մենք ներկայացանք գեղեցիկ կատարումամբ»:

Կարինեի տեղեկացմամբ՝ սա իր կյանքի առաջին հաջողությունն էր, գրել է նաև 12 մանկական երգ, ուզում է առաջիկայում հրատարակել:

Կարինեն 4 տարեկանից Երևանում հաճախել է «Արևներ» մանկապատանեական համույթի պարապմունքներին, Բարսեղ Կանաչյանի անվան երաժշտական դպրոց, ապա Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական քոլեջ, այնուհետև ընդունվել է Մանկավարժական համալսարան՝ շարունակելու մասնագիտական կրթությունը:

«Համալսարանական կրթական միջավայրը առաջին հերթին պրոֆեսիոնալ դասախոսներն են, որոնց շնորհիվ մենք այսօր ձևավորվում ենք որպես երաժիշտ մանկավարժներ, կարևոր են նաև կուրսեցիներն ու ուսանողական բոլոր այն ընկերներ, որոնց շնորհիվ մեր ուսումնառության տարիներն առավել գունեղ են դառնում, առանց որոնց մեր կյանքը կիսատ կլինի»,-ասում է Կարինեն՝ ներկայացնելով, որ շատ է սիրում դասախոսներին՝ նրանց մասնագիտական ու մարդ տեսակը, որոնք մեծ դեր են խաղում ոչ միայնմասնագիտական գիտելիքներ փոխանցելու, այլև իր երաժշտական աշխարհայացքի ձևավորման գործում:

Կարինեն մանկուց զբաղվելով երաժշտությամբ, սիրում է ոլորտը, համալսարանական դասերից հետո դասավանդում է արվեստի դպրոցում, և ապագայում իրեն պատկերացնում է որպես երաժշտության մանկավարժ:

Ի՞նչ տվեց իրեն այս մրցույթ-փառատոնը՝ հարցին Կարինե Թադևոսյանը պատասխանեց՝ մեծ պատիվ էր ներկայացնել Մանկավարժական համալսարանն ու երաժշտության բաժինը, որը տարբերվում էր իր առանձնահատկություններով: Մեծ պատասխանատվություն էր դա, որից պատվով դուրս եկան: Իսկապես դա առաջին մեծ հաջողությունն էր, որը նոր ճանապարհի սկիզբն էր կարծես:

Ալվարդ Ղազարյանը էջմիածնից է, Կարինեի կուրսընկերուհին է, 10 տարեկանից զբաղվում է երաժշտությամբ. հաճախել է էջմիածնի Մակար Եկմալյանի անվան № 1 երաժշտական դպրոցի ջութակի բաժին, ապա ընդունվել է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական քոլեջ, որտեղ սովորել է 4 տարի ևս ջութակի բաժնում, իսկ ավարտելուց հետո ընդունվել է Մանկավարժական համալսարան: Առաջին կուրսից մինչև այսօր աշխատում է երաժշտական դպրոցում: Նա է Կարինեին ուղղորդել՝ մասնակցել փառատոնին, ինքն էլ ջութակով նվագակցել է Կարինեի վոկալ կատարմանը: Սա իր առաջին հաջողությունն էր՝ ասում է Ալվարդը՝ վստահ, որ այս համագործակցությունը կարող է շարունակական լինել:

Ալվարդը մանկուց է երազել դառնալ երաժիշտ մանկավարժ, անգամ մտածում է հետագայում իր դպրոցը բացել էջմիածնում:

Մարիամ Սահակյանն էլ է Կարինեի և Ալվարդի կուրսընկերուհիներից է, սկզբում դժվարությամբ է հաճախել դաշնամուրի բաժին, բայց հետո շատ է սիրել այն: 8 տարի սովորել է Խարբերդի երաժշտական դպրոցում, այնուհետև ուսուցչուհին խորհուրդ է տվել մասնագիտական կրթությունը շարունակել Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում:

Հեղինակային երգ մրցույթ-փառատոնում դաշնամուրային նվագակցությամբ աջակցել է «Վերադարձիր, իմ սեր» ստեղծագործության ներկայացմանը:

Երեք ուսանողուհիներն էլ դրամական պարգևների են արժանացել, դրամական պարգևի է արժանացել նաև համալսարանը:

Հանդիպման վերջում ապագա մանկավարժ երաժիշտների հետո խոսեցինք մերօրյա մշակութային իրողությունների ու երգարվեստի հարցերի շուրջ:

Մեր ուսանողներն իրենց պարտքն են համարում իրենց աշխատանքային գործունեության ընթացքում պահպանել հայ երգարվեստի դարավոր ավանդույթները, սովորողների մեջ ձևավորել է երաժշտական ճաշակ և սեր դեպի լավագույն, մաքուր երաժշտությունը:

«Այսօր ունենք մի իրողություն, երբ թշնամի հարևաններն ուզում են ոչնչացնել մեր մշակութային արժեքները, բայց մենք, որպես երաժշտության մանկավարժներ պարտավոր ենք պահպանել մերը, հայկականը, սեր սերմանել մանկուց և սերնդեսերունդ փոխանցել»,-ասացին ուսանողուհիները, որոնց հրաժեշտ տվեցի՝ առաջիկա նոր հաջողությունների ակնկալիքով:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՐԹԱԿ

Նպատակասլացության ուժը կրթության մեջ

Իմ մանկավարժական ուղին սկսվել է Արցախի դպրոցում՝ մի վայրում, որտեղ ուսուցչի առաքելությունն առանձնահատուկ նշանակություն ունի: Այդ տարիները դարձան ոչ միայն մասնագիտական փորձի, այլև հոգևոր ձևավորման շրջան: Այստեղ ես առաջին անգամ լիարժեք զգացի, որ ուսուցիչ լինելը պարզապես դասավանդել չէ. դա հավատ սերմանելն է, հույս փոխանցելը և յուրաքանչյուր երեխայի մեջ մարդ ու քաղաքացի ձևավորելը:

Հայաստան վերադառնալուց հետո իմ ուղին շարունակվեց «Դասավանդիր Հայաստան» ծրագրում, որը վճռորոշ դեր ունեցավ իմ մասնագիտական կայացման գործում: Ծրագրի շրջանակում ես բացահայտեցի իմ ներքին ուժը, ձեռք բերեցի ինքնավստահություն և նորովի սիրեցի մանկավարժությունը: Ներկայումս աշխատում եմ որպես ուսուցիչ-առաջնորդ, և այս դերն ինձ համար պատասխանատվության բարձրագույն մակարդակն է. այն ինձ տվել է առաջնորդելու կարողություն, հավատ սեփական ձայնիս և սրտանց նվիրվածություն կրթությանը:

Դասավանդում եմ պատմություն և հասարակագիտություն՝ գիտակցելով, որ այս առարկաները ձևավորում են մտածողություն, արժեքային համակարգ և քաղաքացիական դիրքորոշում: Ես ձգտում եմ, որ իմ աշակերտները լինեն մտածող, հարցադրող, ազատ ու պատասխանատու անհատներ:

2024 թվականին կամավոր ատեստավորման ընթացքում հասարակագիտություն առարկայից ստացել եմ 92 տոկոս արդյունք, իսկ 2025 թվականին ստացել եմ առաջին աստիճանի տարակարգ, ինչը մեծ խթան դարձավ իմ մասնագիտական առաջընթացի ճանապարհին:

Այսօր արդեն նպատակասլացորեն պատրաստվում եմ դիմել չորրորդ կարգին՝ շարունակելով ինքնազարգացման և մասնագիտական աճի իմ ուղին: 2025 թվականին արժանացել եմ տարվա լավագույն ուսուցչի մրցույթի նոյեմբեր ամսվա հաղթողի կոչմանը, ինչը ևս մեկ անգամ հաստատեց, որ իմ կատարած աշխատանքը գնահատված է և ունի իր ազդեցությունը:

Ես անկեղծորեն սիրում եմ իմ աշխատանքը և իմ աշակերտներին: Նրանց յուրաքանչյուր հաջողություն իմ ամենամեծ հաղթանակն է: Ուսուցիչ լինելն ինձ համար կոչում է, առաքելություն և պատասխանատվություն ապագայի հանդեպ: Ես նպատակասլաց եմ, մշտապես բաց նոր գիտելիքի ու փոփոխության համար և հավատում եմ, որ կրթության միջոցով հնարավոր է ձևավորել ուժեղ, գիտակից և արժեքներով առաջնորդվող սերունդ:

Անուշ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Կոտայքի մարզի Արամուսի Վլ.Առաքելյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչուհի

Մեր հարցազրույցը գեղանկարիչ, ՀՀ ժողովրդական նկարիչ, ՀՀ նկարիչների և տարբեր երկրների միությունների, միջազգային ընկերությունների ու ակադեմիաների անդամ Հրանտ Թադևոսյանի հետ:

Նա ծնվել է Արթիկի շրջանի Արևշատ գյուղում:

Դասավանդում է Պոլիտեխնիկ համալսարանում և Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանում:

Բազմաթիվ մեդալներին, պարգևներին վերջերս ավելացավ նաև ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության 60-ամյակի առթիվ նրան շնորհված «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» մեդալը և գեղանկարչության զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի և ունեցած վաստակի համար շնորհված «Երևան քաղաքի մշակույթի պատվավոր գործիչ» կոչումը:

Հանրաճանաչ վարպետը շուտով կդառնա 88 տարեկան, բայց ժամանակի և իր ներաշխարհի հետ այնքան համահունչ ու ներդաշնակ է, որ թվում է տարիների նրա կողքով են անցնում, քանզի նրա գունագեղ նկարները ոգեշնչում են ցուցահանդեսների այցելուներին և զարդարում յուրաքանչյուրի կյանքը:

«Ես կարծում եմ՝ իսկապես սիրո գույնը կփրկի աշխարհը. սերը գերագույն ճշմարտություն է».

Հրանտ Թադևոսյան

-Հարգարժան Հրանտ Թադևոսյան, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այն ժամանակ՝ ինստիտուտ) Գեղագիտության ֆակուլտետի առաջին տարվա շրջանավարտներից եք: Տարիների հեռվից ինչպիսի՞ն են ֆակուլտետը և բուհը Ձեր հիշողություններում:

-Մի անբացատրելի ճշմարտություն կար ինստիտուտ ընդունվելու տարիներին, մի առաքինի զգացողություն էիր ապրում, երբ ուսանող էիր ու մի տեսակ տարբերվում էիր քո նախկին ապրելակերպից, վերափոխվում էիր: Լավ հիշողություններ են մնացել: Առաջին անգամ էր նկարչության խումբը բացվում՝ 12 աղջիկ և 12 տղա: Անբացատրելի ձգտումով ապրող մարդիկ էին՝ նկարիչներ բառիս բուն իմաստով, և մի ներքին մրցություն կար մեր մեջ՝ ով կարող է ավելի շատ աշխատելգամեն օր մեկս մեկին զարմացնում էինք: Այն ժամանակ բջջային հեռախոս չկար, կինո նայելու համար մեծ հերթեր էին գոյանում... Մնում՝ քեզ հետ մնաս, նկարես և հրճվես քո արածով... Այդպիսի ապրումներ էինք ունենում: Եվ շատ զուլալ մաքուր, ընկերական հարաբերություններ էին:

Այս շենքում հանրակացարանն էր նաև, որտեղ մենք մնում էինք: Հրաշալի հիշողություններ կան: Մենք խմբով դուրս էինք գալիս, գիտեինք, թե մեծերը Աբովյան փողոցով երբ են քայլում: Ժամը հինգից Ավետիք Իսահակյանն էր շատ դանդաղ քայլելով իջնում, Երվանդ Քոչարն էր գալիս, Կոստան Զարյանը... Նրանց հավաքատեղին ,Մոսկվաե կինոթատրոնի նկարիչների միության բացօթյա սրճարանն էր: Մենք պատկառանքով երբեմն հետևում էինք նրանց, հրճվում, ականջ դնում՝ ինչի մասին են խոսում: Հետո ես ծանոթացա Երվանդ Քոչարի հետ, երկար զրույցներ էինք ունենում, և նրա հետ մեկ-երկու ժամ զրույցը մի ամբողջ տարվա դասընթաց էր ինձ համար:

Ի՜նչ ժամանակներ էին... Կրթվում էինք, ֆրանսերեն սովորում... նա եկել էր Փարիզից և պատմում էր Պիկասոյի, Սալվադոր Դալիի մասին, որոնց հետ մոտ է եղել և Քոչարը, նրա հետ ցուցադրվել են շատ անգամ Փարիզում: Մեր զրույցներին մասնակցում էին Լևոն Ներսիսյանը, Ֆրունզիկը, Շերենցը, Թուխիկյանը, Վլադիմիր Մսրյանը...

Պետք է նշեմ, որ ինստիտուտի դասընթացներն էլ էին վառ ու տպավորիչ՝ Արարատ Ղարիբյան, Պետրոս Բեդիրյան, այն ժամանակվա դեկան Կառլեն Միրզախանյան… Մեծ պատկառանքով էինք լսում նրանց:

Ես հիշում եմ Կարո Մինասյանի ղեկավարությամբ դիպլոմային աշխատանքների պաշտպանությունը ինչ հետաքրքիր էր անցնում: Մի ընտանիքի նման, համախմբված՝ աշխատում էինք: Մենք նկարչագծագրականի առաջին շրջանավարտներն էինք, որ ավարտեցինք 1965 թվականին:

-Այդ տարիներին համալսարանը պրակտիկաներ էր կազմակերպվում նաև Հայաստանից դուրս...

-Այո: Պրակտիկաներն անցկացնում էինք Ռուսաստանի Դաշնությունում. Լենինգրադի էրմիտաժ էինք գնում, Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահ, ամիսներով աշխատում էինք այնտեղ և այնքան հարազատություն կար դասախոս-ուսանող հարաբերություններում:

Մանկավարժականը նաև կազմակերպում էր նկարչության բաց դասեր բնության մեջ. Հաղարծինի ճանապարհին՝ գետի ձախ ափին, վրաններ էինք խփում և նկարում դասախոսների հետ միասին, որոնք անդառնալի հետք են թողել իմ կենսագրության մեջ՝ Հունանյան, Բերբերյան, Մաշինյան, Թևանյան, քանդակագործ Միշա Ավետիսյան, որն Անդրանիկի արձանի հեղինակն է:

-Մի առիթով Դուք ասել եք. «Կտավը պետք է ծնվի ինքնին: Ձեռքը պետք է աշխատի ինքն իրեն, ամեն ինչ պետք է ենթարկվի ներքին մղումին: Ես նկարելիս աշխատում եմ ինքս ինձ չխանգարել»: Կբացե՞ք փակագծերը:

-Գիտե՞ք, ստեղծագործելու պահին երբեմն վերանում ես աշխարհից, որովհետև ամբողջությամբ գտնվում ես այդ զգացական հարթության մեջ և իսկապես չես զգում քո գոյությունը. դու կտավ ես, ներկ ես, այդ պահի մեջ ես, իսկ երբ սթափվում ես՝ վերադառնում ես քո կենցաղին: Ստեղծագործելու պահին իսկապես պետք է ձեռքիդ ազատություն տաս, որովհետև այդ բնազդի գործոնն այնքան զորեղ է, որ բառերով պատմելու չի:

«Արվեստը դպրոցում» ծրագրի շրջանակում ես վարպետաց դասեր եմ անցկացնում Երևանի արվեստի դպրոցներում, և երբեմն տեսնում եմ, որ երեխաները կարծես թե բնազդով ինչ-որ բան են անում. այդ պահին պետք է կանգնեցնել և ուղղորդել նրանց, որովհետև դա նախնիների զորեղ մտքի խտությունն է, որ իրենց միջից դուրս է հորդում: Երբեմն դա վերագրում են Աստծուն կամ բնությանը, բայց կա մի շարունակական ճշմարտություն, որ մարդը նման է իր ծնողին, ծնողն էլ նման է իր ծնողին... Այդ գործոնը որ կա՝ ձեռքիդ պետք է այդ ազատությունը տաս, որովհետև յուրաքանչյուր վրձնահարված հուշում է քո հաջորդ քայլը: Դու ամբողջ էությամբ դրա մեջ ես և քառակուսի միլիմետրերով քո գործողությունն այնտեղ տեսանելի է: Ահա ինչու եմ ես ասում՝ ամեն ինչ պետք է ենթարկվի ներքին զգացումին և ձեռքերիդ պետք է տաս ազատություն, որ կարողանա դա անել: Այդ հմտությունը, այդ կարողությունը ոչ թե հենց այնպես ձեռք է բերվում, այլ իսկապես այդ վարպետության գործոնը ժամանակի մեջ քո տառապանքի վերջնական արդյունքն է, որ կամաց-կամաց մաքրվում է ավելորդություններից:

- Ձեր բազմաթիվ ցուցահանդեսներից ո՞րն է եղել ավելի տպավորիչ ու հիշարժան:

-Ցուցահանդեսներ շատ եմ ունեցել՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Իսպանիայում, Իտալիայում, Ճապոնիայում, Չինաստանում... Թերևս Չինաստանի Ուրումչի քաղաքում կազմակերպված Չինաստան-Եվրասիա ֆորումին մասնակցելը: Երկու տասնյակից ավելի մասնագետներից կազմված խումբը ընտրում էր Եվրոպայի տարբեր երկրներից նկարիչներ: Կովկասից միայն ինձ էին ընտրել: Ահռելի տարածքում շինություններ էին, որտեղ օրական 3 միլիոն մարդ էր մտնում ու դուրս գալիս: Ինձ առաջարկեցին շուրջ 3000 հոգու համար անցկացնել վարպետաց դասեր: Դեպի Տյան-Շան լեռնաշղթան ձգվող հարթության վրա մի բեմահարթակ էր, որը պտտվում էր: Նրա վրա կանգնած ես նկարում էի շատ արագ՝ 45 րոպեում 1 մետր կտավի վրա հասցրի նկարել դիմացի սարը իրենց նախընտրությամբ: Մեծ էկրանների վրա ներկաները հետևում էին իմ աշխատանքին: Հետո ինձ ելույթ տվեցին, իսկ ես ասացի. «Ես զարմացած եմ՝ ինչու եք ինձ հրավիրել, երբ ձեր նկարիչների միության անդամների թիվն ավելի շատ է, քան մեր հանրապետության մարդկանց թիվը» (4 ու կես միլիոն նկարիչ ունեն չինացիները): Նրանք սրտաբուխ ծիծաղեցին, ապա ասացին, որ իմ ոճով տարբերվում եմ բոլորից, դրա համար էլ հրավիրել են ֆորումին:

-Ո՞րն է նկարչի համար ամենակարևորը՝ գնահատանքը, ամենատարբեր պարգևնե՞րը, թե՞ հանրության անկեղծ սերը...

-Գնահատանքը լավ է և հաճելի այնքանով, որ քո աշխատանքը կարևորում են: Մրցանակներ ու պարգևներ շատ եմ ստացել և՛ Հայաստանում, և՛ տարբեր երկրներում: Դա լավ է, որ քեզ չեն մոռանում, գոնե հիշում են:

Վերջերս Երևանի քաղաքապետի կողմից ես ստացա «Երևան քաղաքի Մշակույթի պատվավոր գործիչ» կոչումը:

Ինձ համար ամենամեծ պարգևն ու արժանիքն այն է, որ այս տարիքում ես ապրում եմ ու կարողանում եմ մտածել: Ու մտածում եմ ժամանակի հետ համահունչ քայլել, ես երբեք չեմ մոռանում, որ այս ժամանակի մեջ եմ և այդ հոգեբանությամբ պետք է ապրեմ: Ամեն Աստծո օր ես ուզում եմ նոր ձևով, նորովի մտածել: Ես ամեն օր սովորում եմ...

-Ո՞րն է գեղանկարիչ Հրանտ Թադևոսյանի հավատամքը: Ինչի՞ն եք հավատում այս կյանքում:

-Ես հավատում եմ բնության ամենազորեղ ճշմարտությանը. բնության մեջ ոչ մի պատահական բան չկա՝ ես դրան հավատում եմ: Ամեն ինչ համաչափությունների մեջ է՝ բնության մեջ ոչ մի բարձունք, ձոր կամ փոս պատահական չի: Ես հավատում եմ բնության այդ կանոններին:

-Ինչի՞ն եք ապավինում արագ փոփոխվող այս աշխարհում:

-Արագ փոփոխվող այս աշխարհում շատ բանիմաց ու գիտակից երիտասարդներ կան: Նրանք ժամանակի ծնունդն են և ծնվել են հատուկ նրա համար, որ այսօր գործեն: Արագ փոփոխվող աշխարհում պետք է արագ փոփոխվող հոգեվիճակ լինի, մտածելակերպ լինի, մարդը պրոֆեսիոնալ լինի: Բայց մարդ, ոը պետք է ենթարկվի կանոններին ու չմոռանա իր ազգային բնութագիրը, իր տեսակը, հայի տեսակը: Մենք քիչ ենք, և այդ ամեն ինչը պահելու զգացողությունը կա: Այդ արագ փոփոխվող աշխարհում ես նաև իմ տոհմիկ ճշմարտությունն եմ պահում, բայց հետ չեմ մնում եվրոպական արագընթաց շարժումներից, որովհետև անհատները միշտ առաջ են նայում: Ցավոք, թիմային առումով, չենք կարողանում միասնաբար գործել... Բոլորը ճիշտ են, և բոլորը սխալ են. և ոչ մի անգամ ոսկե միջինը դուրս չի հանվում: Այդ առումով, այս ժամանակի մեջ, մերոնք պետք է կարողանան արժևորել այն մարդկանց, որոնք ի զորու են դիմանալու այդ արագությանը՝ և՛ խելքով, և՛ հմտությունների կարողությամբ:

-Արվեստի խորքում քաղաքակա՞ն իրողություններն են... Այսօր աշխարհը մարդատյաց է դառել՝ զավթողական պատերազմներ, նոր տարածքների ու ռեսուրսների բռնազավթում...

- Այդ իրողություններն անմիջականորեն ազդում են արվեստի ու արվեստագետի վրա: Ես շուտ եմ զրկվել ծնողներից, 3 տարեկանում... Երբ մայրս պատերազմից հորս սև թուղթն է ստացել՝ տեղում կաթվածահար է եղել: Բայց այսօր ես իմ արվեստով այդ տառապանքը չեմ ուզում ներկայացնել, որովհետև ես չեմ ուզում մարդկանց փոխանցել այդ ցավը:

-Իսկ ի՞նչ եք նկարում:

-Ես նկարում եմ պայծառություն, լույս, որ մարդկանց համար տեսանելի լինի: Ճապոնիայում Հիրոսիմա և Նագասակի քաղաքների վրա ատոմային ռումբ են գցել, բայց այդ տեղում նրանք կառուցել են այգի, որտեղ պետք է զբոսնեն ու հրճվեն, այնտեղ ոչինչ չի հիշեցնում անցյալի ողբերգությունը:

Նկարիչները չպետք է մոռանան իրենց առաքելության մասին, պետք է անեն այն, ինչի հանդեպ ունեն, սեր, հավատ և ճշմարտացիություն:

-Որպես շատ տաղանդավոր նկարիչ, վարպետ՝ կասե՞ք, թե աշխատասիրությունն ինչքանո՞վ կարող է տաղանդը վեր բարձրացնել:

-Աշխատասիրությունը բացում է հանճարեղ մարդու բոլոր հնարավորությունները: Եթե չաշխատես՝ քնած էլ մնալու ես:

-Հիասթափության պահեր բոլորն են ապրում. ի՞նչ-եք անում Դուք հիասթափվելիս:

-Երբ որ մեկի հանդեպ սխալ են վարվում՝ ես կանգնում եմ նրա կողքին: Այդ առումով երբեմն հիասթափվում եմ: Արդեն 65 տարի կրթական համակարգում եմ՝ դասավանդում եմ Պոլիտեխնիկում և Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանում: Մանկավարժական համալսարանում մասնակցում եմ ավարտական որակավորման հանձնաժողովներին: Ես շատ եմ կարևորում օբյեկտիվ գնահատելը: Զարմանում եմ, որ ոչ պրոֆեսիոնալ մարդուն երբեմն վստահում են նման բան:

Մեր համալսարանում երիտասարդ շատ լավ նկարիչներ կան, որոնց ես տանում եմ սիմպոզիումների: Սիրում եմ, երբ դասախոս-ուսանող համերաշխ են:

-Նկարիչն ու մանկավարժը Ձեր մեջ իրար հետ հա՞շտ են, իրար լրացնո՞ւմ են:

-Ամեն ինչը նպաստում է նկարելուն:

-Սե՞ր, թե՞ գույն... Միգուցե սիրո՞ գույնը կփրկի աշխարհը:

-Ես կարծում եմ՝ իսկապես սիրո գույնը կփրկի աշխարհը. սերը գերագույն ճշմարտություն է:

-Ի՞նչ կմաղթեք արվեստի մարդկանց, ձեր գործընկերներին:

-Բոլոր դասավանդողներին, սովորեցնողներին ես ուզում եմ ասել՝ պետք է համերաշխություն լինի ձեր և նրանց միջև, ում սովորեցնում եք: Եթե իրենց լեզվով խոսեք՝ ձեզ կլսեն ու կհասկանան: Այդ համերաշխությունն էլ սիրո արդյունք է:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ՄԵՐ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ

Հռիփսիմե Մարոնյանը ՀՊՄՀ մագիստրատուրան գերազանցությամբ ավարտելուց հետո Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում աշխատելու առաջարկություն է ստացել: Համալսարանում հենց այդ տարի՝ 2012 թվականին, բացվել է «Հագուստի մոդելավորում» բաժինը, որտեղ էլ դասավանդում է առ այսօր:

2024-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Երազում է, որ իր միակ դուստրը՝ Մարին, ընտրի այնպիսի մասնագիտություն, որին անսահմանորեն կսիրահարվի:

«ՄԵՐ ԱՄԵՆԱՄԵԾ ՀՈԳԸ ԹՈՂ ԼԻՆԻ ԳՈՒՅՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ».

Հռիփսիմե Մարոնյան

-Կներկայացնե՞ք 2026 թվականի նորաձևության միտումները:

-Նորաձևությունը վերադառնում է դեպի ավելի կանացիություն, ավելի մեծ չափերով հագուստները՝ «oversize» կոչվող, չափերով մոտենում են կազմվածքին՝ ուրվագծին հաղորդելով ավելի կանացիություն: Այս տարի ավելի ընդգծված է լինելու գոտկատեղը՝ կազմվածքին հաղորդելու նրբագեղություն:

Տարին խորհրդանշելու են գույներից կաթնագույնը, ամպի սպիտակը, երկնագույնը, «խակի» ընդգծվածությամբ, որը դեռևս անցյալ տարվանից է պահպանվում:

-Ձեր հագուստն ընտրելիս պարտադիր հետևո՞ւմեք նորաձևությանը:

-Այո, որովհետև աշխատում եմ ուսանողների հետ, և նրանք հետևում են իմ հագնվելու ոճին: Փորձում եմ պահպանել թրենդները՝ գերի չլինելով դրանց: Ես ունեմ իմ նախասիրությունները, որոնց շրջանակում զգեստապահարանս թարմացնում եմ տարվա որոշակի միտումներով:

-Իսկ մեր երիտասարդությունը, մասնավորապես ուսանողները ինչպե՞ս են հագնվում: Թույլ տվեք ասել, որ երիտասարդների մոտ իշխում է իրար նմանվելու մոլուցքը:

-Մեր մասնագիտության աղջիկները կարողանում են իրենց ձեռքերով ստեղծել ոճային հագուստներ և կրել դրանք: Այսօր թրենդային են ավելի հարմարավետ հագուստները և ուղղված են անձի առանձնահատկությունների շեշտմանը: Այսինքն պարտադիր չէ կրկնօրինակել իրար, յուրաքանչյուր անհատի յուրահատկությունը կարևոր է: Իսկ իրար նմանվելու միտումն ինչ-որ չափով պայմանավորված է նրանց համարձակությամբ. եթե համեմատենք մի քանի տարի առաջվա հետ՝ կտեսնենք, որ այսօրվա երիտասարդությունը շատ ավելի համարձակ է՝ և՛ իր քայլերով, և՛ որոշումներով, ինչու չէ, նաև կերպարային լուծումներով: Կարծում եմ միտում կա՝ շարժվելու դեպի անհատականությունը:

-Ինչպիսի՞ն է ուսանողների գիտելիքների որակական մակարդակն ու սովորելու ձգտումը:

-Անկեղծ ասած՝ մեր ուսանողները մեր հասարակության արտացոլումն են, պրոյեկցիան. Ինչպիսին մենք ենք՝ այնպիսին մեր ուսանողներն են: Ուսանողների մի մասը սիրահարված է իր մասնագիտությանն ու գործին՝ ստեղծարար, համարձակ, հանձնարարություններով չսահմանափակվող, փորձարկող նաև. նրանք ուղիներ են փնտրում՝ ավելի հետաքրքիր լուծումներով ստեղծագործություններ ունենալու համար՝ և՛ գունային համադրություններում, և՛ կոնստրուկցիայի առումով: Բայց, ինչու չէ, նաև չհետաքրքրված ուսանողներ ունենք, որոնց փորձում ենք ներգրավել ուսումնական գործընթացի մեջ: Ուրախությամբ պիտի նշեմ, որ մասնագիտությամբ հետաքրքրվածները շատ են:

-Անցյալ ուսումնական տարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների ցուցադրությունը հետաքրքիր էր ու բազմազան, աշխատանքի արդյունքը՝ նկատելի: Որևէ վիճակագրություն կա՞ շրջանավարտներից քանիսն են շարունակում աշխատել ընտրած մասնագիտությամբ:

-Փորձում ենք հետադարձ կապի միջոցով վիճակագրական տվյալներ ստանալ. ուսանողներն ավարտելուց հետո երբեմն մեր աջակցության, խորհրդատվության ու խրախուսելու կարիքն են ունենում: Այս տարի «Պեպսի»-ի նորաձևության մրցույթում լավագույնը մեր շրջանավարտի ստեղծած հավաքածուն էր: Մենք հետևողական ենք և ոչ միայն հպարտանում ենք մեր ուսանողների հաջողություններով, այլև արձանագրում, որ մեր տված կրթությունը բավարարում է այսօրվա պահանջներին: Իհարկե, ամեն տարի փնտրում ենք նոր մոտեցումներ՝ ուսումնական գործընթացն ավելի արդիական դարձնելու համար. և՛ ոլորտի, և՛ ժամանակի պահանջներն են այդպիսին: Մեր ամենամյա ցուցադրություններն էլ են դա փաստում:

-Ձեր մեջ գերիշխողը ավելի շատ դասախոս մանկավա՞րժն է, թե՞ հագուստի մոդելավորման մասնագետը:

-Ես միշտ ինձ համար փաստում եմ, որ այն երջանիկներից եմ, որը համատեղում է և վայելում երկուսն էլ:

-Իսկ ինչպե՞ս ընտրեցիք մասնագիտությունը:

-Մասնագիտությունն ընտրեց ինձ: Ես սկսեցի կարել, երբ ոտքերս սկսեցին հասնել կարի մեքենային: Իմ առաջին կարի մեքենան նվիրեց բարեկամուհիս, որը նրանց խորդանոցում էր: Այնքա՜ն կարատեսակներ էր անում:

Ժամանակն իրենն է պահանջում, և այսօր ես ունեմ նոր սերնդի կարի մեքենաներ իմ սեփական կարի սրահում. չեմ կարող հետ մնալ ժամանակից, բայց մեծ սիրով եմ հիշում իմ առաջին կարի մեքենան:

-Ո՞ր գույներն են գերակշռում Ձեր զգեստապահարանում:

-Գույնը մարդուն որոշակիորն բնութագրող հատկություն ունի: Մենք ենթագիտակցորեն ենք ընտրում այն: Կյանքի յուրաքանչյուր փուլում շատ կարևոր է ոչ միայն ոճի, այլև գույնի ընտրությունը: Գույնը նաև հոգեվիճակ է: Օրինակ կարմիր գույնը դրական լիցքեր է տալիս:

Իմ զգեստապահարանը շատ բազմագույն է: Ամեն տարի որոշակի գույնի հանդեպ ավելի հակվածություն եմ ունեմ, դա արտահայտվում է նաև իմ հավաքածուներում: Իմ կյանքում եղել է նաև մի անցումային շրջան, երբ իմ բոլոր հագուստները մոխրագույն էին:

-Ոճի և գույնի ընտրությունը որքանո՞վ է կապվում ժամանակի տարբեր իրողությունների հետ:

-Մենք ինչքան էլ փորձենք դիտարկել պարզապես նորաձևությունը՝ մենք չենք կարող այն առանձնացնել քաղաքական ու պատմական իրավիճակներից. պետք է փաստենք՝ յուրաքանչյուր պատմական իրադարձություն իր անդրադարձն է ունենում նորաձևության վրա:

Համաշխարհայնացման գործընթացների հետ կապված՝ մենք այսօր ունենք որոշակի համարձակ լուծումներով մարդիկ, որոնք դեռ չգիտեն այդ համարձակությունը դեպի ուր կտանի: Բայց ներքին զգացողությունը, ներքին կուլտուրան մարդ պետք է ձևավորի արվեստի հետ շփումներից: Այդ տեսանկյունից կարևորում եմ «Արվեստը դպրոցում» ծրագիրը, որին մասնակցում է նաև մեր ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը: Այդ հրաշալի ծրագիրը միտված է դպրոցից ձևավորելու սեր ու գիտելիքներ արվեստի նկատմամբ: Մեր ֆակուլտետում կարևորվում է ոչ միայն գիտելիքի փոխանցումը, այլև փոխանցումը ճիշտ միջավայրում: Ֆակուլտետի սրահը գեղագիտական զգացողություններ է առաջացնում, այնտեղ կազմակերպվում են դասախոսների, ուսանողների և դպրոցականների ստեղծագործությունների ցուցահանդեսներ, հանդիպումներ արվեստի մարդկանց հետ՝ ֆակուլտետում անընդհատ պահպանելով արվեստի միջավայրը:

-Ի՞նչ կասեք դասախոս-ուսանող հարաբերությունների մասին՝ Ձեր օրինակով:

-Ես ուսանողին վերաբերվում եմ որպես իմ ապագա կոլեգայի, գնահատումը երբեք չեմ դարձնում ուսանողին խեղճացնելու միջոց, հավատում եմ, որ յուրաքանչյուրը կստեղծի իր ուղին, որով հետագայում կհպարտանանք: Այստեղ մեկտեղվում են ընտանիքը, դաստիարակությունը, աշխատանքի հանդեպ վերաբերմունքն ու սովորելու պատրաստակամությունը, որը մենք համալրում ենք ճիշտ փոխանցվող գիտելիքով, ուղղորդում նաև ինքնակրթությամբ անընդհատ զարգանալ:

-Ինչպե՞ս կբնութագրեք Ձեզ:

-Համալսարանի ուսանողներս գիտեն, որ ես շատ մեղմ, հավասարակշռված մարդ եմ, նորաձևության սրահում մարդիկ գիտեն, որ ես շատ բուռն և էմոցիոնալ մարդ եմ: Կյանքի տարբեր դրվագներում ես այնպիսին եմ, ինչպիսին պետք է ճիշտ հունով ընթանալու համար: Ես ազնիվ եմ ինձ հետ և իմ շրջապատի հետ և անսահման լավատես. յուրաքանչյուր իրավիճակում ես գիտեմ, որ վաղը լավ է լինելու: Մարդկանց մեջ էլ ես գնահատում եմ հավատարմությունն ու ազնվությունը:

-Ունե՞ք այսօր նորաձևության նախընտրելի անհատականություն, ումից սովորել եք:

-Այո: Ինձ համար պատիվ է, որ հնարավորություն եմ ունեցել ճանաչելու «Ատեքս» նորաձևության կենտրոնի տնօրեն տաղանդավոր Կարինե Դնոյանին, մասնագետ, որ բաց է բոլորի համար, պատրաստ է իր փորձը փոխանցել բոլորին: Նա մեր տարեվերջյան քննական ցուցադրության հանձնաժողովի կազմում ճիշտ դիտողություններ է անում, խորհուրդներ տալիս, ուղղորդում:

-Այսօր, ցավոք, շատ մասնագիտությունների գծով համալսարանները դիմորդի խնդիր են ունենում: Կարծում եմ Ձեր դասավանդած մասնագիտությունը հեռանկարային է:

- Հագուստի մոդելավորումը նոր ձևավորվող մասնագիտություն է, այն ընտանիքում ժառանգաբար շարունակվողներից չէ, ինչպես բժշկի, ուսուցչի կամ ճարտարապետի մասնագիտությունը: Շատ բարդ մասնագիտություն է, բայց նաև գրավիչ, ճարտարապետության հետ եթե համեմատենք՝ սա հագուստի ինժեներիան է:

Այնուհանդերձ պետք է ասեմ՝ մենք դիմորդի խնդիր չունենք:

-Ուրիշ ինչի՞ մասին կուզեիք խոսել:

-Նախախնամության կամոք ես հայտնվեցի Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում, որի դերը մեծ է իմ կայացման գործում: Ֆակուլտետը համալրված է հանրապետության լավագույն նկարիչներով, արվեստագետներով, ստեղծագործ մարդկանցով, որոնց հետ ամենօրյա շփումը անհետևանք չի լինում. յուրաքանչյուր օր ես սովորում եմ, ես ամեն օր վայելում եմ նրանց մշակութային միջավայրը, որը ստեղծագործելու լայն հնարավորություններ է ընձեռում:

Մարտ ամսին պրոֆեսոր Անուշ Եղիազարյանի գիտական ղեկավարությամբ ես պաշտպանեցի թեկնածուական ատենախոսություն մանկավարժությունից, որտեղ համադրեցի հագուստի մոդելավորման դասավանդման արդի մեթոդները մանկավարժության հետ: Շնորհակալ եմ բոլոր այն մարդկանց, որոնք իմ կողքին էին իրենց գիտական ճիշտ մոտեցումներով ու բարյացակամությամբ:

-Ի՞նչ կուզեիք ասել ուսանողներին, Ձեր արվեստի միջավայրի մարդկանց:

-Ուսանողներին կուզեի ասել՝ ամեն օր է պետք սովորել: Ամեն օր մենք պիտի մեկ քայլ առաջ շարժվենք, ավելի գիտակ ու ճկուն լինենք մեր գործում: Կոլեգաներիս՝ ջերմագին մաղթանքներ, և կուզեմ, որ մեր ամենամեծ հոգսը լինի գույների ընտրությունը: Թող լինի խաղաղություն, յուրաքանչյուրս կարողանանք ստեղծագործել մեր բնագավառում և ապրել ներդաշնակության մեջ:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

Եթե ցանկանում ենք երեխային դիտարկել որպես նախաձեռնող և ինքնավստահ անհատ

Կրտսեր դպրոցական տարիքն այն ժամանակաշրջանն է, երբ երեխայի ներաշխարհն ու երևակայությունը գտնվում են իրենց գագաթնակետին: Հենց այս փուլում է, որ ստեղծագործականության զարգացումը դառնում է առաջնային և անփոխարինելի կարևորություն ունեցող խնդիր: Երեխայի համար ստեղծագործելը պարզապես նկարելը կամ հորինելը չէ. դա աշխարհը ճանաչելու, սեփական էմոցիաներն արտահայտելու և ինքնահաստատվելու ամենաուղիղ ճանապարհն է:

Եթե մենք ցանկանում ենք տեսնել երեխային որպես նախաձեռնող և ինքնավստահ անհատ, ապա պետք է հասկանանք, որ ստեղծագործական մտածողությունը նրա զարգացման շարժիչ ուժն է: Այն օգնում է փոքրիկ դպրոցականին չվախենալ սխալվելուց, լինել ճկուն և գտնել յուրօրինակ լուծումներ թե՛ դասասենյակում, թե՛ կյանքի տարբեր իրավիճակներում: Ուստի, չափազանց կարևոր է գիտակցել, որ այս կարողությունը միայն բնատուր շնորհ չէ, ընդհակառակը՝ ստեղծագործականությունը կարող է զարգանալ համապատասխան մանկավարժական ռազմավարությունների և բարենպաստ միջավայրի շնորհիվ:

Ապացուցված է, որ մարդկանց հուզական վիճակն ազդում է ստեղծագործականության ակտիվության վրա, իսկ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրական տրամադրությունը կարող է նպաստել ստեղծագործական մտածելակերպին և կատարողականությանը: Ավելին, ստեղծագործականությունը հաճախ կախված է համատեքստից, ինչը նշանակում է, որ շրջակա միջավայրը և սոցիալական գործոնները կարող են էապես ազդել մարդու ստեղծագործական ներուժի վրա:

Մանկավարժական պրակտիկայի ընթացքում սովորողների ստեղծագործականության ակտիվացման նպատակով կիրառել եմ մի շարք մեթոդական հնարներ: Մասնավորապես, «Մտագրոհ» մեթոդի կիրառումը նպաստել է սովորողների տարամետ մտածողության զարգացմանը՝ թույլ տալով նրանց դուրս գալ ավանդական լուծումների շրջանակից և դիտարկել խնդիրը տարբեր տեսանկյուններից: Դերային խաղերի և իրավիճակային վերլուծությունների միջոցով խթանվել է սովորողների էմպատիան և կոմբինատոր երևակայությունը, իսկ անավարտ պատմությունների լրացումը հնարավորություն է տվել զարգացնել ինքնուրույն որոնողական աշխատանքի հմտությունները: Գործնական փորձը հաստատում է, որ մանկավարժական համակարգված ներազդեցությունը և ստեղծագործական ինքնադրսևորման ազատությունը կրտսեր դպրոցականների համակողմանի զարգացման արդյունավետ գրավականն են:

Կրտսեր դպրոցական տարիքում ստեղծագործականության զարգացումը ոչ միայն կրթական նպատակ է, այլև անձի ձևավորման կարևորագույն պայման: Երբ դպրոցը դառնում է անվտանգ և խթանող միջավայր՝ ազատ մտքի, երևակայության և ինքնարտահայտման համար, երեխան սկսում է բացահայտել իր ներուժը՝ առանց սխալվելու վախի: Մանկավարժի դերն այս գործընթացում առանցքային է. ճիշտ ընտրված մեթոդներն ու բարենպաստ մթնոլորտը կարող են ձևավորել մտածող, նախաձեռնող և ինքնավստահ սերունդ: Հետևաբար, ստեղծագործականության խթանումը պետք է դիտարկել ոչ թե որպես հավելում, այլ որպես ժամանակակից կրթության անբաժանելի բաղադրիչ:

Մանե Պողոսյան
Սկզբնական կրթության ֆակուլտետ, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի

Ոչ միայն մասնագիտական հմտություններ, այլև մարդկային հատկանիշներ

Գալիս է մի պահ, երբ հասկանում ես, որ համալսարանը պարզապես լսարաններն ու քննությունները չեն: Այն միջավայր է, որտեղ մարդը ձևավորվում է՝ ոչ միայն որպես մասնագետ, այլև իր իսկ կյանքի պատասխանատու: Ուսանողական տարիները չեն սահմանափակվում դասագրքերով և թեստերով. դրանք փորձի, սխալների, ձեռքբերումների ու հարաբերությունների դպրոց են:

Ուսանողական կյանքը սկսվում է հետաքրքրությունից և նորության հանդեպ ոգևորությունից: Սկզբում ամեն ինչ թվում է ժամանակավոր՝ դասախոսությունները, մարդիկ, նույնիսկ այն լարվածությունը, որ տիրում է քննությունների ընթացքում:: Բայց տարիների ընթացքում պարզվում է՝ հենց այդ ,ժամանակավորնե է ձևավորում քեզ, սովորեցնում է հարց տալ, կասկածել ու պաշտպանել քո դիրքորոշումը՝ ոչ թե բարձր ձայնով, այլ փաստերով ու մտացածին արդյունքներով:

Վեց տարի ՀՊՄՀ-ում անցկացրած ժամանակը ինձ համար դարձել է ինչպես կրթական, այնպես էլ կյանքի փորձ: Ուսանողական տարիներն առաջին հերթին սովորեցնում են ինքնուրույնություն: Դասախոսը ցույց է տալիս ուղղությունը, բայց քայլերը կատարում ես դու: Սխալներ լինում են, հիասթափություններ՝ նույնպես, բայց հենց այդ փորձերն են, որոնք հետագայում դառնում են ներքին հենարան և ապահովում, որ ցանկացած մարտահրավեր ընդունես վստահությամբ:

Մյուս կարևոր հմտությունը ժամանակի արդյունավետ կառավարումն է: Երբ դասերը համատեղվում են աշխատանքի, պրակտիկայի ու անձնական կյանքի հետ, հասկանում ես, որ օրը 24 ժամ է՝ ոչ ավել, ոչ պակաս, ու պետք է ընտրություն անել՝ ինչն է կարևոր հիմա, ինչը՝ հետագայում: Սովորում ես որոշել՝ առաջնահերթությունը ինչին տալ, որոշում կայացնել և պատասխան տալ դրա համար՝ ոչ միայն ուսանողական, այլև կյանքի մակարդակում:

Ուսանողական կյանքը նաև մարդկանց մասին է: Համակուրսեցիներ, որոնց հետ կիսում ես թե՛ լարվածությունը, թե՛ ուրախությունը: Դասախոսներ, որոնք հաճախ խիստ են, բայց ուղղորդող ու ձևավորող: Այս հարաբերությունների մեջ սովորում ես լսել, ընդունել տարբեր կարծիքներ, չհամաձայնվել առանց հակամարտության և գնահատել թիմային աշխատանքը: Եվ հենց այս փորձերն են, որոնք ամենակարևոր դասերն են փոխանցում ոչ դասագրքային ձևաչափով:

Անցած տարիները ցույց տվեցին նաև, որ համալսարանը չի տալիս պատրաստի պատասխաններ, բայց սովորեցնում է ճիշտ հարցեր տալ: Եվ հենց դա է ամենակարևոր ձեռքբերումներից մեկը՝ անկախ նրանից, թե ինչ ճանապարհ կընտրես ապագայում: Ուսանողական տարիները չեն կրկնվում, չեն լինում իդեալական, բայց լինում են իրական: Եթե դրանք քեզ օգնում են դառնալ մի քիչ ավելի գիտակից, մի քիչ ավելի պատասխանատու և մի քիչ ավելի անկեղծ ինքդ քեզ հետ, ուրեմն այդ տարիներն իսկապես արժեքավոր են:

Արամ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ,
Հասարակագիտության բաժնի մագիստրանտ

Ժեստերի «խոսքի» ուժը սպորտում

Առաջին հայացքից սպորտում որքան ցինիկ ու անլուրջ են ժեստերն, այնքան ավելի խորն ու լուրջ են նրանց հիմքում ընկած պատմությունները: Դրանց ստեղծման պատճառները տարբեր են ու հիմնականում՝ ոչ դրական. դժվար կյանք, մահվան տարեթվեր, խորհրդանշական թվեր, հիասթափություն, անվստահություն ու թերահավատություն: Պարզապես մենք դրանց ժպիտ ու հաղթական էմոցիաներ ենք ավելացնում, որ հիշվեն:

Դրանք ստեղծելու համար, վստահաբար, օրեր ու ամիսներ են պահանջվում, որպեսզի «միքսվեն» միմյանց հետ ու հարաբերվեն մեր ամենահիշարժան պատմության հետ: Մեկը ցույց է տալիս հայրիկի վարած երթուղայինի համարը, որի միջոցով աշխատած գումարները օգնեցին երազանքներին՝ չմնալ թղթի վրա ու դառնալ իրականություն: Մյուսը ձեռքերն ամեն անգամ երկինք է պարզում ու շնորհակալություն հայտնում տատիկին՝ իրեն հավատալու համար:

Իմ ժեստերը թերահավատության մասին են: Նրանց հասցեատերերը հիասթափությունների ու մոտիվացիայի հեղինակն են:

Նրանց ուղարկված ժեստերը խոսում են կամուրջներ այրելու և հետադարձ զանգի հնարավորությունից զրկվելու մասին: Իհարկե, նրանք երբեք էլ չեն իմանա, որ հեռավորության վրա ինչ-որ մեկի մոտ 100-րդ փորձից հետո վերջապես ստացվեց, ու նա պոռթկաց, բղավեց, վազեց, հետո մի ակնթարթում սառավ ու հիշեց, որ եկել է հիշելու ժամանակը...

Ամեն անգամ զանգվածներին «բարևներ» ուղարկելիս մի քանի գրամ թեթևացնում եմ հոգիս և հիշում, որ դեռ կիլոգրամներ են մնացել, ու կրկին հաջողելու ցանկությունը սկսում է ավելի արագ աճել ու առաջ մղել:

Սրտիս տեղը երբեք ավելի պարզորոշ չեմ իմացել, ինչքան հիմա: Ու հիմա, երբ հիշողությունդ լարես ու հասկանաս, որ դու ևս զանգվածի մասն ես, ուրեմն իմ ժեստերը նկարագրող տողերը հատուկ քեզ համար մեծատառերով. «ՄԱՐԴԻԿ, ՈՐՈՆՔ ԻՆՉ ՉՀԱՎԱՏԱՑԻՆ, ԹՈՂ ԵՐԲԵՔ ԱՅԼԵՎՍ «ՉԶԱՆԳԵՆ»...

Արգիշտի ՊԵՏՐՈՍՅԱՆ
Հեռուստառադիոլրագրության բաժնի 4-րդ կուրսի ուսանող

Հիշողությո՞ն, թե՞ երևակայություն

20-ամյա ուսանողուհիներին բնորոշ փրփուր- թեթևությամբ քննարկում էինք ծանրակշիռ հարցեր: Ընկերուհիս հանկարծ իմ առջև դրեց անհիրական թվացող մի բարդ ու տիեզերածավալ ընտրություն. հիշողությո՞ն, թե՞ երևակայություն: Չփորձեցի հիշողությունս լարել ու կարդացածս գրքերից մի դիպուկ ու խելացի թվացող պատասխան նետել: Նախ՝ սուրճի սեղան էր: Արդարացի չէր լինի նետել մի նշանավոր գրողի միտք, որը գուցե տակնուվրա աներ ամենն ու թափեր իմ սուրճը: Ազնիվ չէր լինի ո՛չ իմ, ո՛չ էլ տվյալ գրողի հանդեպ: Ոչ բոլորն են Քամյու, որ սուրճի մեջ աբսուրդային կյանքի իմաստը կարողանան ներարկել: Հետո, որ ամենից կարևորն է, դա իմը չէր լինի: Հավասար կլիներ գողության. հետո՞ ինչ, որ յուրաքանչյուրն էլ տեսականորեն կարող էր կարդացած լինել տվյալ գիրքն ու հիշել հենց նույն միտքը: Չէ՛, դա իմը չէր լինի: Գրականությունը հիշելուց զատ մեզ մտածել է սովորեցնում: Երևակայությունս էլ չլարեցի, որ պատկերացնեմ ինձ, իմ առջև՝ կշեռք, նժարներին՝ հիշողություն ու երևակայություն: Այդժամ մտածում էի՝ առանց հիշողության ու երևակայությանը «նեղություն տալու»: Ինչպես պատահում է հաճախ, այս դեպքում էլ հարցն իր հետևից հարցեր բերեց, սուր ու տարաբույր հարցեր: Գրողները հիշողությա՞մբ, թե՞ երևակայությամբ են առաջնորդվում: Հասկացա, որ հիշողությունն ու երևակայությունը, որ մտածողությանս շերտերում գալիս էին զուգահեռ, խախտեցին մաթեմատիկական ճշմարտությունն ու, այնուամենայնիվ, հատվեցին: Այո, նրանք մի կետում հատվում են, նմանվում իրար: Կհարցնեք, թե որն է սրանց ընդհանրությունը: Ես կասեմ՝ երկուսն էլ ունակ են պատրանքներ ծնելու: Ռոմանտիկ գրողները փայփայում են և՛ հիշողությունը, և՛ երևակայությունը: Իրողություններն ու մարդիկ, երևույթներն ու սովորական թվացող ճշմարտությունները տարիների բովով են անցնում ու մեր հիշողության պատուհանը թակում այլ կերպարանքով: Գուցե մե՞նք ենք դրանք այլ կերպ ընկալում: Ամեն դեպքում անհերքելի է, որ հիշողության դիտանկյունից այլ պատկեր է մեր մտային աշխարհում հառնելու: Սփյուռքահայ գրականությունից Կարոտի շարժումն ենք ուսումնասիրել: Այստեղ գրողների հուշ-հիշողությունն էական դեր է խաղում: Բեկոր առ բեկոր գրողը հավաքում է հուշերը, որպեսզի միավորի, ստանա պատուհան, որով էլ ճանապարհ բացի դեպի կորսված հայրենիքը: Ի՞նչ, պիտի ասեք, թե ֆոտոգրաֆիական (լուսանկարչական) ճշմարտությա՞մբ է կատարում իր ստանձնած առաքելությունը: Հուշը հաճախ ճանապարհ է բացում դեպի պատրանքների աշխարհ: Երևակայությունն էլ պատրանքների աշխարհը գունավորողն է: Ես ի վերջո ընտրեցի հիշողությունը. մենք հիմա դրա կարիքը շատ ունենք: Ո՞վ գիտի, գուցե մտքերս երևակայությանս արգասիքն էին...

Սուսաննա ՉԱՐՉՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 4-րդ կուրս



ԳԻՐՍ ՄՆԱ ՀԻՇԱՏԱԿՈՂ... ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Լույս է տեսել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հայ լեզվաբանության անխոնջ մշակ, վաղամեռիկ Լալիկ Մնացականի Խաչատրյանի հիշատակին նվիրված «ԳԻՐՍ ՄՆԱ ՀԻՇԱՏԱԿՈՂ... ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ժողովածուն, հիշատակարան, որտեղ ամփոփված են անվանի լեզվաբանին նվիրված գնահատանքի խոսքեր ու հուշեր, ճանաչված մտավորականի գիտական գործունեությունն ու անցած ուղին:

Գրքում Լալիկ Խաչատրյանը ներկայացվել է ընտանիքի անդամների ու հարազատների, Սրբազան այրերի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի աշխատակիցների, ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակիցների, Սիրիայի համազգային կազմակերպության և Հալեպի հայ համայնքի անդամների, Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի գործընկերների, լեզվաբան և լրագրող ընկերների, ԵՊՀ Բանասիրական ֆակուլտետի ընկերների, Շիրակի համալսարանի դասախոսների, համակուրսեցիների, հայրենի եզերքի նշանավոր մարդկանց, ընկերների ու բարեկամների, ինչպես նաև շրջանավարտների հուշերում:

Գրքի սկզբում Լալիկ Խաչատրյանի կնոջ՝ ՀՊՄՀ Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Մարգուշ Միրումյանի խոսքն է՝ ուղղված ընթերցողին:

«Հարգարժան ընթերցող, Ձեր սեղանին է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խ.-Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ (2001-2016 թթ.), ապա՝ Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիայի վարիչ (2018-2024 թթ.), «Մովսես Խորենացի» մեդալակիր Լալիկ Մնացականի Խաչատրյանին նվիրված հուշապատումը, որն իր մեջ ընդգրկում է հուշեր նշանավոր լեզվաբանի մանկության, պատանեկության, ուսանողական կյանքի, որպես մանկավարժ ու լեզվաբան և որպես անհատ կայացման, ողջ կյանքում բարիք սերմանելու, իր ապրած կյանքով օրինակ ծառայելու վերաբերյալ:

Լալիկ Խաչատրյանը մարդ էր, որը գիտեր անմնացորդ նվիրվել թե՛ ընտանիքին, թե՛ իր գործին և թե՛ իր ընկերներին ու հարազատներին:

Երբ նա բարի գործեր էր անում կամ լավություն որևէ մեկին, չէր ուզում նրանից «շնորհակալություն» բառը լսել, պարզապես ուզում էր նրա աչքերում տեսնել գոհունակություն, կամ տեսնել, թե իր հովանավորյալը ինչպես է բարի գործ կատարում՝ օգնելով ուրիշներին, ովքեր դրա կարիքն ունեն:

...Նա շիտակ էր ու հախուռն. երբեք չէր կեղծում, ասում էր այն, ինչ մտածում էր, ինչ իր համոզմունքն էր, և եթե որևէ մեկը նրա դիտարկումից նեղվում էր, անմիջապես ասում էր. «Դառը ճշմարտությունը քաղցր ստից լավ է»: Շատերը գիտեին նրա բնավորությունը, և գիտաժողովների ավարտին բոլորն ուզում էին լսել նրա հեղինակավոր կարծիքը, որը թեկուզ այդ պահին կարող էր ,դառըե լինել, բայց հետագայում այն ,կքաղցրանարե՝ մասնագետի խորհուրդը լսելով ու կատարելով:

Նա հաճախ էր ասում, որ դասախոսի, այդ թվում նաև իր առաքելությունը ուսանողին միայն գիտելիք փոխանցելը չէ, այլև՝ նրա աշխարհայացքը, հետաքրքրությունների շրջանակը ընդլայնելը, նրան բազմակողմանի զարգացած մարդ դաստիարակելը, որը կլինի մեր լեզուն անաղարտ պահողը, կլինի վաղվա քաղաքացին, հայրենիքի նվիրյալը և կայուն ընտանիք ստեղծողն ու լավ զավակներ մեծացնողը:

Իմ շնորհակալությունն ու խոնարհումը նրանց, ովքեր իրենց մեծարանքի խոսքն են ասել, իրենց հուշերն են տրամադրել Լալիկ Խաչատրյան մարդու, դասախոսի, գիտնականի, ընկերոջ ու հարազատի մասին:

Բոլոր հուշերը լուսավոր պատումներ են նրա կյանքի տարբեր դրվագների վերաբերյալ և հուշում են, որ նա կա և միշտ կլինի, քանի դեռ նրա գրքերն ու հոդվածները ընթերցողներ կանե:

Հասկացա, որ ճիշտ ուղու վրա եմ

Ուսանողական կյանք մտնելուց հինգ ամիս անց առաջին կուրսեցիներն արդեն հստակ պատկերացում ունեն բուհական կյանքի մասին: Դասարանից լսարան, ուսուցչից դասախոս անցումները, անծանոթ առաջադրանքները և նոր ռիթմը սկզբում կարող են դժվար թվալ, բայց աստիճանաբար ուսանողը սկսում է հարմարվել և գտնել իր տեղը համալսարանում:

«Դպրոցից հետո շատ դժվար էր հարմարվել համալսարանական դասերի ռիթմին, անծանոթ առաջադրանքներին և նոր ուսումնական ռեժիմին, բայց աստիճանաբար սկսեցի հարմարվել ու հունի մեջ ընկնել: Այդ ընթացքում մեծ դեր ունեցան դասախոսները՝ իրենց վերաբերմունքով ու աջակցությամբ, ինչպես նաև ավագ ընկերները, որոնց խորհուրդները շատ օգնեցին կողմնորոշվել ուսումնական գործընթացում»,-Սկզբնական կրթության ֆակուլտետի, «Տարրական մանկավարժություն» բաժնի առաջին կուրսի ուսանողուհի Ժաննա Հարությունյանն իր փորձառությունը նկարագրում է այսպես:

Ուսանողուհին ընդգծում է, որ առաջին կիսամյակի ընթացքում, չնայած դժվարություններին, դրական կողմերն անհամեմատ շատ են եղել. մասնագիտական գիտելիքները, նոր ծանոթությունները և ընկերները դարձել են ամենակարևոր ձեռքբերումները:

«Վերջին ամիսների ընթացքում շատ բան եմ սովորել: Ամենից շատ ուրախ եմ մասնագիտական գիտելիքներիս համար: Հիմա վստահ եմ, որ ճիշտ տեղում եմ, ճիշտ մասնագիտություն եմ ընտրել ու ճիշտ ուղու վրա եմ: Հաճույքով եմ դասերին մասնակցում», - ասում է նա:

Առաջին կուրսի ուսանողների համար երկրորդ կիսամյակը սկսվում է արդեն նոր սպասելիքներով: Առաջին կիսամյակը թույլ է տվել հասկանալ ուսումնական գործընթացի կառուցվածքը, դասերի պահանջները ու սեփական հնարավորությունները: Այս անգամ առաջին կուրսեցիները պատրաստվում են նոր մարտահրավերների՝ ավելի կազմակերպված և նպատակային մոտեցմամբ: Նոր համալսարան ոտք դրած աբովյանականները վստահ են՝ այս կիսամյակը ևս հնարավորություն կտա խորացնելու ձեռք բերած գիտելիքները և ամրապնդելու հմտությունները:

Վիկտորյա ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՊՄՀ հեռուստառադիոլրագրության բաժնի 1-ին կուրսի ուսանող

Լույս է տեսել

ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի Հայոց պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, Պատմական գիտությունների դոկտոր Վանիկ Վիրաբյանի «Նահապետի ամառն ու աշունը, էքզիստենցիա» բանաստեղծությունների ժողովածուն:

«Գրքում հեղինակի որոնումներն են ժամանակի և տարածության մեջ՝ եռաչափ աշխարհի չափումներում, երկրայինի և երկնայինի դեմ-հանդիման կանգնած երկտակված մտքերն ու ընկճախտային ընկալումները, բայց ոչ հանձնվողականությունը և կյանքի անկում ընթացքին տրվելը:

Այն հեղինակի երկտակված մտքերի փոքրիկ արտացոլանքն է, Ես-ը և արձագանքը կյանքի բացվող օրվա ու կյանքի անկապ ու ոչ անկապ ելևէջումներին: Սա պարզապես հեղինակի էքզիստենցիան է»,-գրված է գրքի համառոտ ներկայացման մեջ:

«...Նահապետ-Վանիկ Վիրաբյանի բանաստեղծություններին ծանոթանալուց հետո ծնվեց «Շահե՞լ է պատմագիտությունը, թե՞ կշահեր գրականությունը» վերնագիրը,- ներածականում գրում է պատմաբան, արձակագիր Տիգրան Պետրոսյանցը:-Համոզված եմ, որ պատմագիտությունը շահել է. վկա են շուրջ երեք տասնյակ գիտական մենագրություն-գրքերն ու հարյուրի հասնող գիտական հոդվածները:

Կշահե՞ր արդյոք գրականությունը: Այս դեպքում արձանագրում եմ, որ եթե հեղինակը տասնամյակներ շարունակ դրանք չթաքցներ և աշխատեր դրանց հանրայնացման ուղղությամբ՝ գրականությունը նույնպես կշահեր:

Ինչպիսի լավ կամ քննադատական վերաբերմունք էլ ծնեն ներկայացվող բանաստեղծական շարքերը, դրանք մարդ անհատի ապրումների, գոյաբանական Ես-ի հոգեբանական արտացոլումն են և իրավունք ունեն լինելու ներկայացված»:

***

Օրը խանդաղատանքով հավերժին փարվեց
Ու իր խառնաշփոթ մտքերը պահ տվեց,
Օրը հավերժին ընդառաջ գնաց...
Օրը հավերժ էր թվում,
Հավերժը՝ օր...
Օրը հաջորդ օրվան ընդառաջ գնաց
Ու հաջորդվող օրվա սկիզբը դարձավ...
Օրը հավերժին փարվեց մեղմիկ գորովով՝
Կարծես հավերժի մի մասն էր անբաժանելի...
Օրը հավերժվեց
Ու խաղաղ հաջորդ օրվա մեջ տարրալուծվեց...
Օրը օրվան ընդառաջ գնաց
Ու հավերժի ճամփորդը դարձավ,
Եվ նրանք երկուսով ճանապարհ ընկան:

Անձրև էր...
Անձրև էր թախծոտ,
Օրը հևալով գնում էր առաջ՝
Հոգնած մտքերի ետևից քարշ գալով...
Անձրև էր թախծոտ...
Օրը ուժասպառ գնում էր
հաջորդ օրվան ընդառաջ՝
իր հետ տանելով անձրևոտ հույսեր՝
փաղաքշանքով գրկած...
Անձրև էր՝ հույսերի մեջ խճճված
օրվան համընթաց,
փութկոտ շտապում էր առաջ՝
մի պահ ննջելու հապշտապ քայլքից
ու նոր օր սկսելու...
Անձրև էր թախծոտ,
Անշտապ գնում էր, գնում՝
չգիտես՝ ու՞ր և ինչի՞ համար,
Անձրև էր թախծոտ,
Մեղմիկ գնում էր առաջ՝
մարող արևի շողերը գրկած...
Անձրև էր թախծոտ...

Զարթեի՛ր ու տե՛ս

Զարթնի՛ր ու տե՛ս,
թե ինչ թախիծ է ներսդ սողոսկել,
Զարթնի՛ր ու փորձի՛ր լեզու գտնել
թախծիդ անորոշ գալարումների հետ,
Մտքերդ շարժիր ու փորձիր զգալ
սիրտդ սողոսկող թախիծն անագորույն...
Մտքերդ շարժիր ու փորձիր գրկել
ներսիցդ դուրս հորդող
թախիծն աստվածային,
որ ներս է մտել ու դուրս չի գալիս...

Ներկայացնում են ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարանի սովորողները

Կարոտիս թևերով

Տա՜տ, պա՜պ, արդեն մեկ տարի է անցել այն օրից, երբ ձեր քայլերի ձայնը վերջին անգամ հնչեց մեր տան շեմին: Մի տարի, երկար ու անհասկանալի լռություն. ժամանակն ասես կանգ է առել հենց այն պահին, երբ ձեր ստվերները հեռացան մեր բակից, իսկ ես մնացի սպասման մեջ՝ հիշողությանս ամենախոր անկյունում պահելով ձեր ժպիտի ջերմությունը: Օրը թվում էր սովորական, բայց հիմա գիտեմ՝ այն կիսեց կյանքս երկու մասի՝ մինչև ձեր մեկնելը և հետո՝ առանց ձեզ: Այդ օրվանից օդը փոխվեց. սենյակները մնացին նույնը, բայց ձայները՝ ոչ: Նույն լուսամուտներից արևը ներս է մտնում, բայց նրա ջերմությունը այլևս չի դիպչում այտերիս: Քայլում եմ նույն ճանապարհով, ամեն քար հիշում է ձեր քայլերի հնչյունները ու հնչեցնում: Եվ երբ քամին է անցնում տան մոտով, բերում է ձեր քայլերի արձագանքը՝ մեղմ, անողոք... այն նույն ձայնը, որով ասես աշխարհը հրաժեշտ տվեց մանկությանս:

Վերջին ձեր հայացքի մեջ կար հույս, ուժ, ցավ ու լուռ վախ: Դուք ցույց չտվեցիք դա, բայց ես զգացի, ինչպես թաքուն հոսող գետը, որի ակունքներն անհայտ են: Այդ նույն վախն ապրեց իմ մեջ այս ամբողջ տարվա ընթացքում. վախ, որ մի օր գուցե մոռանամ ձեր ձայները, ձեր ձեռքերի ջերմությունը, ձեր ծիծաղի պարզ ու մաքուր թրթիռը, որ մի ժամանակ ամբողջ աշխարհս էր:

Տա՜տ, երբեմն թվում է՝ քո ձայնը հնչում է խոհանոցից այնպես պարզ ու հարազատ, ինչպես միշտ. «Արթնացիր, Աննա, արևը բարձրացել է»: Քո ձայնի մեջ կար մոգական մի փափկություն, որ արթնացնում էր ոչ միայն մարմինս, այլև հոգիս: Գիշերվա կեսին, երբ քամին սահում է վարագույրների միջով, թվում է՝ դա քո շունչն է՝ մեղմ, անտեսանելի, բայց այնքա՜ն իրական:

Պա՜պ, ծիծաղդ դեռ արձագանքում է բակում. թվում է՝ հենց կյանքն է քեզ հիշում: Դու միշտ ասում էիր. «Ուժեղը նա չէ, ով չի լալիս, այլ նա, ով չի թողնում՝ արցունքն իրեն կործանի»: Խոսքերդ հիմա իմ սրտի սյունն են. երբ հոգնում եմ, երբ աշխարհը մթնում է, ես դրանք շշնջում եմ ինչպես աղոթք: Թվում է՝ արևը շողում է, բայց սառն է, մրսում եմ, մարդիկ խոսում են, բայց ես լսում եմ միայն լռությունը: Ամեն ինչ կարծես շարժվում է առանց իմ մասնակցությանգ ես մնացել եմ այնտեղ՝ այն օրվա լուսաբացի մեջ, երբ ձեր ստվերները ձգվեցին երկար ճանապարհի վրա:

Հաճախ եմ կանգնում մեր բակի դռան մոտ, որտեղ վերջին անգամ ձեռքս դիպավ պապիս բաճկոնին. այդ պահը դաջվել է մաշկիս վրա:

Գիշերը, երբ լուսինը բարձրանում է երկնակամար, թվում է՝ անցնում է աշխարհի բոլոր օվկիանոսներով, գտնում ձեր պատուհանը և նայում նույն փայլով, ինչ այստեղ՝ իմ սենյակում: Ես մտածում եմ, որ այդ լույսն է մեզ միացնող գաղտնի ճանապարհը: Անտեսանելի, բայց մշտատև այդ լույսով դուք գտնում եք ինձ անգամ այդքան կիլոմետր հեռավորությունից: Մեկ- մեկ էլ մտածում եմ՝ դուք նստած եք լուսնի մյուս կողմում ու ձեր նույն, բարի աչքերով նայում եք ինձ: Գիտեմ, դուք լսում եք իմ նամակը, ոչ թղթի, այլ սրտի ձայնով: Ես ապրում եմ ձեզ հետ ամեն օրը, անտեսանելի, բայց անբաժան: Դուք չեք հեռացել, դուք պարզապես փոխել եք ձեր կերպարանքըգ դարձել եք լույս, աղոթք, հիշողություն: Եվ եթե երբևէ ուշ երեկոյան երկնքին նայելիս զգաք, որ ձեզ հիշում են, իմացե՛ք՝ դա ես եմ: Ես դեռ սպասում եմ: Ոչ մի ճանապարը չի չափում այս հեռավորությունը, որովհետև սերը, որով սնեցիք ինձ, չափ չունի. այն ապրում է: Դուք իմ ներսում եք ինչպես լույսը, ինչպես աղոթքը, որ երբեք չի լռում: Եվ եթե մի օր քամին մեղմորեն թակի ձեր պատուհանը, եթե լուսինը այդ օրը ավելի փայլի, իմացեք՝ դա իմ սերն է՝ ուղարկված երկնքով:

Աննա ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հենակետային վարժարան (ավագ դպրոց), 11-րդ դասարան

Ինչո՞ւ են ապրում չար արարածները

Մարդիկ ժամանակ առ ժամանակ մոռանում են իրենց ներսի լույսի մասին: Նրանք սովորում են ապրել ստվերի մեջ, վախի ու կասկածի սահմաններում: Երբ մարդ կորցնում է հավատն իր ուժերի հանդեպ, նա դառնում է խոցելի ոչ միայն արտաքին վտանգների, այլև սեփական եսի վիշապների առջև:

Նավակի մեջ կանգնած ռազմիկը նայում է գետի ալիքներին, որոնք հիմա արդեն հանդարտ էին. ասես երբեք փոթորիկ չէր եղել: Բայց նա գիտեր ճշմարտությունը. գետն ապրում է իր օրենքներով, ինչպես կյանքը: Այդ օրենքներից էր՝ միայն նրանք են հասնում մյուս ափ, ովքեր չեն հրաժարվում ճանապարհից, թեկուզև ճամփին վիշապներ կան: Նա սուրը դնում է պատյանի մեջ ոչ այն պատճառով, որ այլևս վտանգ չկար, այլ որովհետև հասել էր խաղաղության իր ներսում: Դա ամենամեծ հաղթանակն է. ճակատագրի դեմ կռիվը սրտի զորեղություն է պահանջում, ոչ մկանների ուժ:

Մարդ պիտի կարողանա նայել իր ներսը, ճանաչել իր վախերը ու քայլ անել դեպի լույսը, թեկուզ այն դեռ շատ հեռու թվա: Միայն այն ժամանակ, երբ մարդ դադարում է հնազանդորեն ընդունել վիշապի ներկայությունը՝ որպես անխուսափելի ճակատագիր, երբ նա կռվում է, նույնիսկ երբ թվում է, թե ելք չկա, վիշապը մահանում է: Ո՛չ որպես էակ, այլ որպես գաղափար, որ խորտակում է մարդու հոգին:

Հ. Գ. Աշխատանքները գրվել են դասարանում նույն վերնագրով չինական առակը կարդալուց հետո՝ որպես առակի մեկնաբանություն:

Ինչո՞ւ են ապրում չար արարածները

Չար արարածները գոյություն ունեն լոկ այս պատճառով. աշխարհում պետք է լինի հավասարակշռություն, ինչպես լույսի ու խավարի, այնպես էլ՝ չարի ու բարու միջև: Նրանց մշտաներկա պայքարն օգնում է մեզ ճանաչել ու արժևորել բարին, պայքարել նրա հաղթանակի համար, սիրո համար: Չար արարածները դառնում են փորձություն կամ դաս՝ ցույց տալու համար մեր խիզախությունն ու ուժըգ երբեմն էլ ,չարե կոչվածը կարող է պարզապես լինել չհասկացվածը՝ ծնված անցյալի ցավերից: Ուստի, չարի գոյությունը ընտրության հնարավորություն է, հնարավորություն ընտրելու և կերտելու քո ներսի աշխարհը: Չար արարածները քայլում են լուռ, ինչպես գիշերը ցերեկվա երազների մեջ: Նրանք ծնվում են այնտեղ, ուր սերն աղմկոտ լքել է մարդկանց սրտերը, և ցավը դարձել է հաղորդակցության միակ լեզուն: Չարի ստվերների միջով անցնելով է մարդը գտնում իր ներսի լույսը, որ չի մարում վախից: Չարն ապրում է, որպեսզի բարի սրտերը չմոռանան իրենց առաքելությունը: Զարմանալի է. երբեմն հենց չարից է, որ ծաղկում է ամենախորունկ բարությունը:

Մանե ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հենակետային վարժարան *(ավագ դպրոց),* 11-րդ դասարան

Հայրենիքս. անգո՞, թե՞ հավերժական

Հեշտ է ծաղրել մարդկանց, որոնք, ըստ մեզ, անում են այն, ինչ մենք երբեք չէինք անի: Արդյո՞ք չէինք անի, մտածե՛ք: Մատնացույց ենք անում մարդկանց, որոնք տարված են անգո, անիրական խնդիրներով: Իսկ մե՞ր հոգին, ինչո՞վ է լցված մե՛ր հոգին: «Չէ՞ որ հայրենիքն էլ անէ հասկացություն է»: Թեև... Թեպետ անգո, աներևույթ է, սակայն կենարար է, կենսական, անտրոհելի մեզանից: Այն սնուցանում է դատարկ հոգիները:

Հող ու ջրի սերը բառերով չես արտահայտի «ամենա» լինելու դեպքում անգամ: Անիմաստ է ճամարտակել նվիրվածության մասին, երբ ներսումդ բույն է դրել մեղավոր փնտրող հրեշը: Արդյո՞ք մեր մեջ կա հայրենասեր այն ոգին, որ ակնկալում ենք տեսնել բոլորի մեջ: Ոգին այդ առասպելական ցնորք է, որ ունակ է ժայթքելու, երբ հայրենիք չունի: Սերը մեր էության արտացոլանքն է՝ հայրենիքի տեսքով: Երբ լինել-չլինելու վտանգի մեջ է հավերժական սերդ: Ասում են՝ սերը զգացմունք է: Սխալվում են, գուցե ասողը հայրենիք չունի: Սերը մեր էության արտացոլանքն է՝ հայրենիքի տեսքով:

Տավիղ ՄՈՒՐԱՏՅԱՆ
Հենակետային վարժարան (ավագ դպրոց), 11-րդ դասարան

Հիսուս և Պիղատոս

Հիսուսի և Պիղատոսի հանդիպումը պատմության մեջ մի պահ է, երբ երկնայինն ու երկրայինը համարձակվել են իրար աչքերի մեջ նայել: Այդ հանդիպումը միայն դատավարության արձանագրում չէ. այնտեղ հնչում է լռության ճիչը, այնտեղ ստվերված ճշմարտությունն է ու հոգու դատաստանը: Պիղատոսը ներկայացված է որպես հողի մարդ, ուժի և... վախի մարմնացում: Նա տեսնում է իր առաջ մի մարդու, ում աչքերում ո՛չ մեղադրանք կա, ո՛չ պաշտպանություն. միայն անդունդի պես խոր լռություն: Այդ խաղաղությունը կուսակալին ավելի է շփոթեցնում, քան մեղադրանքը կշփոթեցներ: Նա զգում է՝ իր իշխանությունը փոշի է, եթե դիմացինի հայացքը դեռ մնում է անսասան: Հիսուսը չէր դատվում. նա լուռ վկայում էր: Նա լռությամբ բացահայտում էր մարդկության տկարությունը արդարությունը որոնելու, բայց և ճշմարտությունը չընդունելու դառը իրողությունը, երբ այն կանգնած է մեր առաջ մերկ ու անպաշտպան: Պիղատոսը լվանում է իր ձեռքերը, բայց նրա հոգին մնում է պղծվածգ ջուրը չի մաքրում այն ամոթը, որ արդեն խարանված է նրա ճակատին: Նա ազատում է մարմինը, բայց կապում է հոգին վախով ու պարտավորության շղթաներով:

Այս պատումը հավիտյան մնում է խորհրդանշական՝ յուրաքանչյուրի ներսում շարունակվող պայքարի կերպարանքով: Մեր մեջ էլ ապրում են Հիսուսն ու Պիղատոսը. մեկը՝ լռությամբ ճշմարտություն խոսող, մյուսը՝ բանականությամբ արդարություն որոնող, բայց վախկոտ՝ ընտրելու այն: Ամեն անգամ, երբ մարդը կանգնում է չարի և ճշմարտության խաչմերուկին, Հիսուսն ու Պիղատոսը նորից հանդիպում են նրա հոգում:

Արտակ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Հենակետային վարժարան (ավագ դպրոց), 11-րդ դասարան

Հ. Գ. Փոխադրություն գրելու համար նախատեսված «Հիսուս և Պիղատոս» տեքստը կարդալուց հետո տրվել է հանձնարարություն՝ դասարանում գրել փոքրիկ պատում «Ձեռքերը լվանալ» և «Ես անմասն եմ այս արդար մարդու արյունից» արտահայտությունների կիրառմամբ:

Մի՛ պատռեք նամակները

Երբեմն պարզ թղթի կտորը կարող է իր մեջ ամփոփել մի ամբողջ սիրտ: Երբ թանաքով գրված բառերը ձայն են տալիս լռությանը, իսկ տողերը դառնում են հոգու մերկ խոստովանություն, թուղթն այլևս սովորական նամակ չէ. այն դառնում է կենդանի հիշողություն:

Նամակ գրելը մի տեսակ մոգական պահ է, երբ զգացմունքը գտնում է իր ճանապարհը՝ թղթի վրայով սահելու դեպի մեկ ուրիշ սիրտ: Նամակի միջոցով մենք ճանաչում ենք մարդու հոգին, նրան, ով վաղուց մեր կողքին չէ կամ մեր կողքին է միայն ֆիզիկապես: Նամակի տողերում ապրում են չասված սերերն ու անավարտ ցավերը, ուշացած ներողություններն ու անկեղծ կարոտները, որոնք ձայն չունեն, բայց ունեն թևեր: Այդ տողերն անլսելի շշուկներ են, որ գալիս են սրտի ամենախոր անկյուններից՝ մաքուր, բիբլիական պարզությամբ:

«Մի՛ պատռեք նամակները»: Առաջին հայացքից սա հնչում է որպես պարզ հորդոր: Բայց իրականում այն լուռ ուղերձ է, խնդրանք. մի՛ կործանեք հիշողությունը, մի՛ լռեցրեք սրտի ձայնը: Նամակը ժամանակից փրկված մեր աշխարհն է, ցավ է, որը բուժում է հիշողությունը, կարոտը:

«Մի՛ պատռեք նամակները». նրանք մեզ տալիս են այն, ինչ հնարավոր չէ գտնել կյանքում, գրքերում՝ անկեղծություն առանց հերոսի դիմակի: Ի վերջո, նամակ պատռելը ինքնապաշտպանություն է. պատռում ենք, ինչից վախենում ենք: Չենք ուզում նորից զգալ, չենք ուզում նորից վերապրել: Այո՛, բայց ճշմարտությունն անգամ պատռված թղթի մեջ է շարունակում ապրել: «Մի՛ պատռեք նամակները», թողե՛ք, որ նրանք ապրեն, թողեք, որ ցավեցնեն, հուզեն, թողեք որ... փրկեն:

«Մի՛ պատռեք նամակները»:

Հ. Գ. Որպես արձագանք Վարդգես Պետրոսյանի համանուն ստեղծագործության:

Անգելինա ԲԱԼՅԱՆ
Հենակետային վարժարան *(ավագ դպրոց),* 11-րդ դասարան

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ